

միայն ունեցել են բարձր մտաւորականութիւն , այլ և կուլտուրա :

Կրիեզ իր ընդհանուր ազգաց պատմութեան մէջ Մարաց մասին խօսած ժամանակ կըսէ . «Առաջները Իրանի մէջ առաջին դերը կը պատկանէր Մարաց . որոնք պարսիկներէն շատ առաջ ծանօթ էին Ասորական կուլտուրային . անոնցմէ ձեռք բերին սեպագրութիւն , արուեստ . ճարտարապետութիւն , քանդակագործութիւն : Յետոյ պարսիկները Կիւրոս Թագաւորի նախաձեռնութեամբ մօտ 506 թիւ՝ կործանեցին Մարաց տէրութիւնը , ու առաջնութիւնը անցաւ պարսիկներին , որոնք կազմեցին Մարերու հետ մի ազգ» :

Այժմ խօսինք լեզուի մասին : Կուլտուրան իր ընդթով , իր զարգացական շրջանին մէջ երթալով՝ անհատականութենէ , ցեղականութենէ , ազգայնականութենէ կանցնի միջազգայնութեան ու կը հասարակականայ . լեզուն ընդհակառակն է . երթալով աստիճան առ աստիճան՝ իր զարգացումին մէջ կը ցեղականանայ , կազգայնանայ ու ինքնուրոյն կը դառնայ : Ասոր համար է որ ցեղը , ազգը առաւելապէս կը շեշտուի իր լեզուով :

Ըստ Սքէնտէրի , «Սաշնարած ժողովուրդները , մետաղական աշխատանքի և երկրագործութեան անծանօթ կենալով , մնացած են անշարժ (stationnaire) , միջալայրի մը մէջ՝ յարմարցուած ատանձնական կեանքի . ըստ A. Schleicherի (*) : «Լեզուներու կեանքի օրէնքներէն յետոյ , ժողովուրդը որ կը խօսի իր այս ներկայի լեզուն , պէտք է ապրած լինի առնուազն տասնադար տարի» :

Ահա գիտական տեսութիւն մը ցեղի մը ինքնուրոյն գոյութեան մը :

Ելելէ Րըֆլիւ Քիւրդ լեզուին համար կըսէ . «Քիւրդերու բոլոր բարբառներու հասարակական կազմը էսպէս Իրանական է . արեւեկան ցեղերու մէջ իրենց բառարանը հարստա-

(*) Sociologie page 54. Les Aryas.